

Luy ✓
244

N 97

~~✓ 157~~ ✓ 206. 159

2000



159 278
321.9.281 134757
S-40

ԱՐԻԵԼ

ՀԵՇՈՒՐ ԳԵՎՈՅՑԻՆԵՐԻՆ

Դրիգոր Տէր Մելքիսեդեկեանի կողմից:

2089

Թիֆլիս.

Յ. Մարտիրոսեանցի տպարան:


1879

6614-663

ԱՐԱՋԱԲԱՆ:

1876 թվին վերադառնալով Նվասաւէտպօլից
(Գեանջից) Շուլաւեր, շուլաւրեցի մի քանի հարուստ
հայրենակիցներից ես սկզբում ընդունվեցայ ամենա-
սիրալիր կերպով. այնպէս որ էլ չժողին ինձ գնալ
իմ սիրած Գեանջին ու կարգեցին ինձ առանձին տը-
նային պայմանաթղթով իրանց 20 որդոց վրա
մասնաւոր ուսուցիչ։ Սրդարութեան սկզբի համեմատ,
ես սկսայ ամենատանկիրք կերպով թափել իմ աշխա-
տանաց Ճիգը բոլորի որդոց վրա, առանց մի որ և
է զանազանութեան. Էդ պատճառով շուտով ես ա-
տելի դարձայ հայրերից մի քանիմներին, որոնք ինձ
առանձնապէս առատ առատ պարգևներ էին դրկել
ու պատվել։ Բայց էս բաւական չէր. հասարակաց
գործերն անաշառ քննադատութեան տակ ձգելով,
մենք ատեցինք միանդամայն և գեղցիներին
անխղճմատանք կերպով. հարստահարող՝ ծծող
իշխաններին, անարժան հոգևորականներին, բայց և
պայմանաթղթի համաձայն առաջ էինք տանում
խղճմատաբար ուսուցչական պաշտօնը, մինչև որ հա-
րուստ հայրերը, տեղական տէրտէրների շարունակ
գրգռմունքներից յաղթված, քանդեցին պայմանա-

Дозволено цензурою. Тифлисъ. 22 Января 1879 г.



28-243

(5015)
38

244-2002

Таш. И. Мартirosianца, на Орбеліановской улицѣ д. № 5

թղթի միտքը, կցկուր տալով ինձ իմ՝ առանց էն
էլ սահմանափակ ռոճիկը:

Դրանից յետ մենք բոլորովին հեռացանք քէթ-
խուդաներից, աղաներից, անարժան հոգեորական-
ներից—ու գալրանք իսկական մշակ քեասիք՝ անօգ-
նական գեղական դասին։ Զեռք զարկեցինք ժողովր-
դական ուսումնարանին, բայց և հիմնելուց առաջ
մեր գործողութեան մասին ավեցինք Շուլաւրա հա-
սարակութեան համոլիսաւոր կերպիւ հաշիւ, որ և տըպ-
ված է էս տեսրակի մէջ ճառի տեսակով։ Խեղճու-
թեան, ծաղրածութեան, ձմրան ցրտութեան յաղթե-
լով երկաթէ հաստատամութեամբ, նոր ժողովրդա-
կան ուսումնարանի մէջ ընդունումէինք յայտնի կարո-
ղութեան տէր մարդկանց որդոցը ամսական 1-2 ռուր-
լիով, իսկ աղքատների որդոցը—անվարձ և ուսումնա-
րանի հաշվով։ Ուսումնարանի բոլոր արդիւնքը մխե-
լով խեղջ գեղջիների որդոց կոչիկների և գրքերի վրա,
մենք հազիւ ապրումէինք խնդրագրութիւններով ու
բողոքագրութիւններով։ Բայց 'ի վերջոյ միքանի անձինք,
համարելով մեր ուղղութիւնը վնասակար, սկսեցին
հալածել մեզ և մեր ուսումնարանը։ Մենք էլ տես-
նելով հալածանքը, մի կողմից։ Միւս կողմից՝ ուսում-
նարանի և իմ նիւթական վիճակի վերին աստիճան
խեղճութիւնը,— փակեցինք կամաւոր կերպիւ գե-
ղջիների համար բացած ուսումնարանը։ Պէտք է ա-

մելցնենք. էսաեղ, որ Շուլաւրեցի Ռոման Պաւլովիչ
Նադիրեանը, Թիֆլիսի հասարակութեան յայտնի ան-
ձը, մահի չափ վիրաւորվեց, նախազգալով առաջուց,
որ իր բացած ուսումնարանը (եթէ կարելի է այժմ
ուսումնարան անուանել *) շուտով ու յանկարծ պիտի
լինի խորտակված Գրիգոր Տէր Մելքիսեդեկեանի ան-
կեղծ և քրտնալիր աշխատանքի վրա հիմնվող ու-
սումնարանից։ **) Դեռքանի Շուլաւրում չունէի բացած

*) Թէ ինչ աստիճան արժանաւորութիւն ունի էդ
ուսումնարանը, մենք արդէն նկարագրեցինք նրան ան-
ցեալ 1878 տարվա ուու «Օնօրը» լրագրի 86 Ն-ում.
Խոկ թէ նրա մէջ սովորցնող վարժակետ Տէր Պողոս քա-
հանայ Խոահակեանցն էլ ի՞նչ յատկութեան տէր մարդ
է, դրա մասին կենդանի կերպիւ խօսումնն նրա խկա-
կան ձեռով զրած ու այժմ մեր մօտը գտնվող նամակա-
գրութիւնները, Որովհետեւ էդ նամակները, զզվելի բովան-
դակութեան պատճառով, անհնարին է տպագրութեան
տալ։ — ուստի, մենք մտագրվումենք շուտով թարգմա-
նել նրանցը ուուսերէն՝ հասցնելու Թիֆլիսի պրօկուրորի
տեղեկութեան, եթէ յիշեալ քահանան ամենակարծ մի-
ջոցում տպագրապէս՝ 'ի լուր հասարակութեան, չտայ
մեզ բացատրութիւն յիշեալ նամակների մասին։ —

**) Ժողովուրդը, քանի որ ընդհանուր խառնակութիւն
չէր սկսված տեղական տէրտէրների շնորհու, բոլոր իր
որդոցը դուրս բերեց Նազիրեանից հիմնած ու մի քանի
տէրտէրներով ու տիրացուներով կառաւարվող ուսում-

ուսումնարան, Նազիրեանը ինձ ամէն կերպիւ աշխատումքը համոզել որ չգնամ Շուլաւրա պէս մի ապերախտ տեղ, որտեղ տխմար մարդիկ չեն գնահատելու մեր արժանաւորութիւնը (կարծես թէ տխմարութենից ու տղիտութենից ունենայինք իրաւունք արդար գնահատութիւն պահանջելու), բայց տեսնելով մեր անքանդեղի հաստատամութիւնը ծառայել ժողովրդին, — կանչեց իր մօտ Մակի Մեհրաբովին, Էն մարդին, որ միւս հայրերի ու իր կողմից գեռնոր կապել էր ինձ հետ ուսուցչական պայմանաթուղթը. կանչելով իր մօտ, նա աշխատումքը համոզել նրան, ինչպէս մի ռամիկ մարդի, քանդել ինձ հետ կապած օրինաւոր պայմանաթուղթը. Բայց Մակի Մեհրաբեան հաստատ մնաց սկզբում իր կապած պայմանի վրա. . !

Գլուխը Տէլ Մելչետէկէան:

Հարանից և խոռոն կերպիւ դիմումքը ինձ ընդունելու իր որդոց նոյն վարձով մինչեւ անդամ, ինչպիսի վարձով ընդունված էին ինձ մօտ հարուստների որդիքը. բայց, աւանդ որ պայմանաթղթով առաջին տարում կապված էին ստքերս ու ձեռներս. իսկ երկրորդ տարում, ինչպէս կտեսնի ընթերցողը տպված ճառի մէջ, հանդէս եկան հոգերականաց ու իշխանաց ինտիգաները, նրանց նախանձը դէպ'ի խեղճ գեղըցիները և ատելութիւնը դէպ'ի ժողովրդական կենդանի նահատակները:

ԱՌԵՎԵՐ ՔԵՎՈՒԹԻՒ ԳԵՂԱԼՑՈՒՅՆ:

Հորովէլ ա' եղը ջան,
Քէ մաստաղը քու նանին զուրբան,
Կա'լ արա, տարմա'ն արա, ա' եղը ջան,
Տարմանը քեզ ցորէնն ինձ, ա' բալամ ջան, ա խուզի ջան, հորովէլ.

Քէառէ գէւը յի:

Քանիցս անգամ ականջ եմ զրել
քու հորովէլներին, որոնցը երգումէ
քու կոպտացած ձէնը զրելթէ ամէն ա-
մառվան վերջ կալ կասելիս, — և քա-
նիցս անգամ սարերի վրա, ձորերի մէջ
միս մենակ թաղվել եմ մոտծմանց մէջ
քու մասին! ...

Եշելով քու կեանքի վրա, ես տեսա
որ դու աշխատումես սաղ տարին
բիւթիւն, միշտ հանապազ եա մէջքդ
կռացած բաղերի ու քոլերի մէջ, եա
հա թէ չէ՝ քրտնակոխ ըլած հունձ ա-
նելիս արտերի երեսին...

Քու ապրուստի վրէն մտիկ տա-
լով, ես տեսա որ քու կոպիտ հալաւը
երկու—երեք տարիներով մնումէ մի հատ,
էն էլ կեղտոտ՝ ոջլոտ, որ հազիւ թէ
երկու—երեք ամսէն մի հետ թափ է
տվյում թորոնի մէջ կրակի վրա՝ ոջիւ-
ներից ազատելու համար քու ջանը...
Ուտելիքդ տարվա մէջ լինումեն. մէծ
պասին՝ աղցան, շաբթէնը մի անգամ
լորի, մոխոխ կամ հիւնի թթու, ամ-
մա շատ անգամ՝ ցամաք հաց օջաղի
առջե տաքացրած կամ պղնձի մէջ ե-
փած, եթէ հացը բարթու է. ուտիս
վախտեքին՝ էլի ցամաք հաց, հազա-

րից մի անգամ քաշովի, լորի. երկու
շաբթէն, իսկ շատ անգամ հինգ՝ վեց
ամսէն մի անգամ միս (որը լինումէ
սովորաբար ջիգար կամ թափան, ու
եթէ իսկական միս՝ ոչ աւելի երկու՝ ե-
րեք գրվանքից՝ ողջ օղլուշաղի համար).
Ու քանի՛ քանի՛ օղլուշաղներ, որոնք սաղ
տարին գոնէ մի անգամ մսի համ չը-
տեմնելով, քարշ են տալիս ամենախըլ-
ճալի կերպով իրանց մթին կեանքը. ու
քանիմները, —որոնք կարօտ ամէն բա-
նից նօքարութիւն՝ լվացք՝ հացաթխու-
թիւն են անում սրա նրա դռան՝ դար-
տակ ցամաք հացի գնով!...

Ու էղափիսի աղքատ ապրուստով ու
աշխատալի կեանքով, ամէն տարվա
վերջը տեսա ես քեզ միշտ պարտքակոխ՝
քէթխուղաների ոտքի առաջ կանգնած,
անհախ կամ հացի գնով շաբաթներով
ու ամիսներով նօքարութիւն անելիս...

Ծանր կերպիւ քննելով քու խեղ-
ձութեան պատճառները, ևս խոր կեր-
պիւ հասկացայ, որ դու քու տգիտու-
թենից ու անուսումնութենից հազար
տեսակ կողոպտանքների տակ ևս ընկ-
նում:

Եղ բոլորից յետ, ևս փոխվեցի բո-
լոր սրտով. երեխայութենից դարձա
մարդ. մտիցս զցեցի իմ սէրը դէպ'ի
ազգակիցք, բարեկամներ ու սկսեցի էդ
օրից սիրել առ հասարակ ընդհանուր
կարօտացած, բայց աշխատաւոր մարդ-
կութեան (քեասիր գեղըցիներին. ուսւ
գեղըցիներին, հայ գեղըցիներին, վրացի
թէ թուրք գեղըցիներին, բոլորին՝ ա-
ռանց զանազանութեան). ևս ատեցի
էդ օրից բոլոր քեզ անխղճմտանք կեր-
պիւ թալանողներին:

Եղ բոլոր խեղճութիւնների, զըր-
կանքների ու անիրաւ թալանչութիւն-

ների մէջ քու ցաւերը իսկապէս թե-
թեւացնող հաւատարիմ ընկերներդ են
քու մի ակ լուծ եղը, եթէ նա էլ զեռ
հալա չէ ծախված զանազան պարտքերդ
ծածկելու համար: Դարձիր, դէ ուրեմն,
իմ քեասիր գեղըցի, դէպ'ի քու միակ
լուծ եղը, որոնիր միակ ու վերջին յոյսդ
էլի քու պարզ ու տխուր մենախօսու-
թեան մէջ, որը ուղղումն եղներիդ
ամէն կալկասին:

Քէ մատաղ քու նանին զուրբան,
կալ արա, տարման արա, ա՛ եղը ջան.
Տարմանը քեզ ցորէնն ինձ, ա՛ զուգի ջան, ա՛
բալամ ջան,
Հորովէլ հորովէլ ա՛, օ՛, տիւ...

ՇԹԻԼԱՒՐԱՎ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հերու երբ ես եկայ վարժապետութիւն անելու Շուլաւեր, ամէնքն էլ սաւայի քեասիբ գեղըցին, կարծումէին թէ ես եկել եմ մենակ իրանց խէրին ծառայելու. իշխաններն ասացին, աչապ. Գրիգորն էկաւ, մեր որդոց ուսում կտայ. ու էգուց էլ մեր որդիքը իրանց ուսումով բարձր կլինեն գեղըցիների որդկերանցից, ինչպէս էսօր մենք բարձր ենք գեղըցիներից. ու սկսեցին էդ մըտքով ամէն մէկը պատվել ինձ, որ ես նրանց որդոց ուսման մէջ առաջ տանեմ:

Տէրտէրները, որոնք սկզբում ամէն թահը աշխատումէին թափուն որ ես չլինեմ էստեղ, երբ տեսան որ չաստատ մոքումն դրել եմ Շուլաւից չեռա-

նալ սկսեցին իրանց ղայդէն փոխել: Նրանք սուտ սկսեցին կեղծաւորվել, աղասիութէնով սկսեցին կամաց-կամաց մօտենալ ինձ, քելեխների վրա ղոնաղ անել ժողովրդի առաջ տակս դնելու համար մութաքա պահանջել ու ժողովրդի հացն ուտելիս նրանք սկսեցին ծանր ու բարակ նստել ու ինձ. հետ գրափառ-գրափառ խօսել որ ինչ ա իրանց անուսումնութիւնն ու տգիտութիւնը ծածկեն ժողովրդից, ու խաբեն խեղճ ժողովրդին թէ իրանք ուսում ունեն, իրանք են բան հասկանում, ու ժողովուրդը չէնց ախմախ ա ու բան չի հասկանում ու չպէտք է էլ հասկանան ու ես էդ բոլոր բաները ծածկեմ ժողովրդից, ու սուտ ու փուս կացած ոչինչ չխօսամ. ու, վերջապէս, եթէ խօսեմ էլ, ապա սուտ սուտ գովեմ նրանց անարժանութիւնները, որ նրանք

աւելի հեշտութենով քամեն ու մզեն
ժողովրդի արիւնը:

Մենակ քեասիր գեղօցին կտրեց
ինձանից իր յոյսը: Աչա սերթուկաւոր
պ. Գրիգորն էկաւ, ասեց գեղօցին,
իշխանների որդիքը ուսում կառնեն փո-
ղով, ու իմունքը կմնան էլի առաջվան
խեղճութեան ու անուսումնութեան
մէջ. չիւնքի ես փող չունիմ, ես պարտ-
քաթաղ ըլած եմ ու անջաղ կարողա-
նումեմ իմ օղլուշաղի օրական ոիսխը
ծածկել: Ու էղպէս, քեասիր գեղօցին
իմ կեալ աւելի անիծեց քան օինեց:
Ամմա՛ ինչ ղայդի ես ժաժ եկա:

Իշխաններն ու անարժան տէրտէր-
ները մի քանի հատ են ու անխղճմր-
տանը կերպով են ծծում ժողովրդի ար-
իւնը. իսկ քեասիր գեղօցիները մի քանի
հատի տեղ մի քանի հարիւրներ են, ու
թիով ու բահով ապրելով հալալ աշ-

խատանկով են կառաւարվում: Ուրեմն,
լաւ ա որ էն մի քանիների աչքից
ըլեմ որ մի քանի հարիւրներին խեր
ըերեմ ու նրանց ցաւին գարման ըլեմ:
Էդ միայն արի ու սկսեցի իշխաններից
ու անարժան տէրտէրներից հեռանալ
ու քեասիրներին սիրել ու էդ օրից սկըս-
վեցաւ կուիւը. ես, մի կողմից. իսկ իշ-
խաններն ու անարժան տէրտէրները
միւս կողմից:

Ես չկաշառուեցի ոչ պրից, ու սկսե-
ցի քարոզել որ իշխանները մեղաւոր են.
որ նրանք տասը թուման փողի գլխին
տասը թուման շահ դնելով շինումեն
քսան թուման ու երբ բաղաքաղը գա-
լիս է, նրանք՝ իշխանները խօսքը մին
են անում շիրի մազանդէն բոլորովին
վեր քցելու, ու թունգին շատ անգամ
պարտի մէջ առնումեն վեց եա օխտ
շահով. գեղօցին սաղ բաղի երեսը տա-

լով իշխաններին, տաս թուման շահի տակից անջաղ կարողանումէ դուրս գալ. իսկ տասը թուման փողի գլուխը վէքսէլով մնումէ, որ թխսկան հաւի պէս էլի ճուտեր անի իշխանների համար գալ տարվան մէջ։ Եղափիսով գեղցին դառնումէ իշխանների ճորտը ու միշտ կարօտութեան մէջ. և իշխանները տեսնելով գեղցու էդ խղճալի վիճակը, տանջումնն նրան, կէս զնով բանացնել են տալիս նրանց իրանց տներում, բաղերում, արտէրում ևայն։

Անարժան հոգևորականներին սկրսեցի մեղաղքել որ նրանք ծծումնն քեասիր գեղցու արիւնը անխնայ կերպով. ասումնն թէ չենք ուզում որ ժողովուրդը քելեխներ պատրաստի, ամմա ամենից առաջ իրանք են նստում բազմում քելեխներում։ Ո՞ւ մեղաղքեցինք անարժան հոգևորականներին որ նրանք

պարապ ման են գալիս փողոցներում, ժողովոդի խէրի համար ոչինչ գործ չեն կատարում, չունին իրանք էս ժամանակի ուսումը, չեն էլ ցանկանում որ ժողովուրդը առաջ զնա ու ամէն կերպով աշխատումնն մմութեան մէջ պահել նրան։ Ո՞ւնք քարոզեցինք որ քեասիր գեղցին մեղքն է՝ պէտք է ցաւենք նրա վրա ու չպիտի ծծենք նրա արիւնը, ամմա պէտք է մեր կարողութեան չափ օգնենք նրան, զարման լինենք նրա ցաւըրին։ Ու էդ ոչ թէ մենակ խօսքով ասեցինք, ամմա աշխատեցինք, ինչքան կարելի էր, գործով էլ նշանց տալ։ Անարժան տէրտէրներից չեռանալով, մենք միտնգամայն չեռացանք գեղցու արիւնով պատրաստած քելեխներից, որտեղ գեղցին իրան ունեցած չունեցածը մնխումէ, կարծելով թէ իր մեռելի հոգին զրանով կարելի էր արքայու-

(5015) 244 - 2002



թիւն զըկել: Ա երջապէս, անարժան չոգևորականներին մենք ասեցինք, որ դու՝ չոգևորական, գրաբառ խօսելով ոչինչ չես շինիլ ժողովրդի համար, պիտի ժողովրդի մէջ պարզ ու հասկանալի լեզուով ուսում տարածել իրանց առողջութիւնը պահելու, որ հարիւրներով ամէն տարի չկոտորվեն մի դարտակ բանով ու նրանց օղուշաղնին չըմնան որբ ու անօգնական. պիտի որսերէն լեզու սովորցնենք որ գեղըցին իր բաղերը, իր տները պարտքերի մէջ կիսագնի տանուլ չտա, պիտի աշխարհագրութիւն սովորցնենք, որ նա իմանայ թէ ին'չ աշխարհներում ին'չ աշխատանքներով են առաջ գնում, ին'չ երկիրներում ին'չ բաներ են լինում, որ եթէ մեր երկրներում էլ լինէին էն բաները, — ապա մենք բաղդաւոր կլինէինք ու չինք լինիլ մատնուած ամօթալի խղճութեան: —

Իշխանները և տէրտէրները չուզեցին մեզ հասկանալ ու ամէն տեսակ չարութիւններ սկսեցին մոգոննել մեր դէմ: Լզգպէս, մի հայ մէլիք, որ իր տունը մեզ էր տուել ու սումնարանի համար, կացաւ մինչև տունը պօլեցինք, մօտը ուսումնարանի համար կուխնայ շինել տալ տուինք մօտ հարիւր մանէթ մսիսելով ուսումնարանի հաշվեց, ու հէնց շինութիւնը վերջացաւ թէ չէ, իշխանների հետ թարուն խորհուրդ տեմնելով, իսկոյն դաւի դառաբայ գցեց ու դուրս արաւ մեզ մեր ծախսով պօլած ու մօտը մեր ծախսով նոր կուխնայ շինած տանից: Լզ կովի մէջ մեզ թակեցին, սաստիկ խայտառակեցին ու անխնայ հայհոյանք տուին: Տէրտէրները և իշխանները ուրախացան, կարծեցին թէ էդ անպատվութենից կրզզուեմ՝ կվերկենամ կչեռանամ լաւութիւն չիմանող Ըոլաւրից ու Ըոլաւ-

մերը էլի կմնա իր առաջվան տղետ
միւութեան ու խաւարի մէջ։ Ամմա ես,
ուշունցներից ու խայտառականքներից
չյուսահատվեցի, ինչպէս ուզումէին. ես
ասեցի որ ինձ էդ խայտառակութիւն,
ուշունցներ ու սնսպատվութիւն տվող-
ները եղել են ոչ թէ Ըուլաւրա գեղը-
ցիները, այլ մէլիք. ուրեմն եթէ մի մէլիք
ուզում ա իմ ուսումնարանին թշնամու-
թիւն անել էդ չենշանակում թէ Ըուլա-
ւրա գեղըցիներն են անում թշնամութիւնը
ուգէշ մարդալիտի համարեմ ոչ թէ գեղըցի-
ներին, այլ մէլիքին, որ ինըն իրան ու-
զումա վնասել ուսումնարանին։ Ու թէ էլի
չպէտք է յուսահատվենք էգպէս դատարկ
բաներով ու մեր ուսումնարանի գործը
պիտի առաջ տանենք առանց յուսահատ-
վելու։ Տէրտէրները երբ տեսան որ էդ
տեսակ բաները բանի տեղ չեմ գցում,
այլ ընդհակառակն աւելի յատա-

ճոեցի ժողովրդի մէջ լոյսի գործը ա-
ռաջ տանելու, սկսեցին ուրիշ նոր նոր
թալակներ սարել. նրանք սկսեցին ինձա-
նից անհիմն կեանգեատներ տալ արք-
եպիսկոպոս սրբազան Այլազովսկուն.
Արքաղանն էլ գեռ ջանաշելով ինձ, այլ մի
բանի մարդկանց խօսքով (ինչպէս ինքն ինձ
ասեց), այդ կեանգեատները հասցրեց
Թիֆլիսի գուրէրնատորին, բայց գուրէր-
նատորը այդ կեանգեատները թողեց էնպէս
առանց չետևանքի։ Տէրտէրներն էդ վախ-
տը զանազան մարդկերանցով սկսեցին ինձ
վախացնել, որ ես, թողնեմ իմ վարժա-
պետութիւնը ու վեր կենամ զնամ՝ էս-
տեղեց. ամմա ես ծիծաղեցի էդ ըոլոր
բաների վրա ու հաստատամտութենով
մնացի էստեղ։ Վիայն, պէտք է ասել, որ ես
իմ ոռչիկը, որ էր մօտ 500 մանէթ, ես ընչ-
կլի էդ վախտը կանոնաւոր կերպիւ ստա-
նումէի ու սրտանց ուսում էի տալիս.

բայց երբ էդ տէրտէրները սկսեցին էդ
տեսակ չարագործութիւնները, մեր սոր-
վող պարոնների հայրերը սկսեցին վա-
խնալ ու կարծել թէ մի բանի օրից
յետ իմ ուսումնարանը կփակուի ու էդ
պատճառով սրտները կոտրեցին ու
սկսեցին իմ աշխատանքի փողերը չըտալ
եա եթէ տալ, ապա էն էլ կցկտուր ու
էս սհաթս հարիւր մանեթի չստանա-
լու մասին ես ստիպուած էի գործը դա-
տաստանական կեանգեատի մէջ պահե-
լու։ Եւ էդպէսով էդ չարագործութեան
պատճառը դուրս եկաւ էստեղի մի ա-
նուսումն, տգէտ հոգեորականի ձեռքով։
Տեսնելով որ իմ ուտելիքը պակասեց,
իմ աշխատանքն էլ հետևապէս կամաց
կամաց սկսեց թշնալ։ Ես սկսեցի ա-
տել Ըուլաւրի հիմիկվան անարժան հո-
գեորականներին ու քարոզել որ էդ ա-
նարժան հոգեորականների գործը նման

չե Քրիստոսի ու նրա առաքեալների
պարզ ու անարատ կեանքին. որ Քրիս-
տոսը ծնվեց ախոռի մէջ ու գլուխը
զնելու տեղ չունէր. ամմա անարժան
հոգեորականները ծծելով անխնայ կեր-
պով քեասիր գեղըցու արիւնը, պալատ-
ներ են շինում իրանց համար քեասիր
գեղըցու աշխատանքով, լաւ շորեր ու
ճռճռալէ պոլսապոժկէ.քով են ժաժ գա-
լիս դարձեալ քեասիրների հաշվով ու
փոխանակ ժողովրդի մէջ հընկերու-
թեան հոգի տարածելու, ուսումը պատ-
վելու, սկսեցին նրանք ժողովրդի մէջ
խոռվութիւն տարածել և ուսումը հա-
լածել. չեւնքի քանի ուսումը տարած-
վի, էնքան ժողովրդի աչքը կբացուի,
ժողովուրդը դարաակ մարդկերանց կը-
ճանաչի ու նրանց պատիւն էլ ժողո-
վրդի աչքում կվերընկնի ու էլ չեն կա-
րող էն ուսուայութենով ծծել քեասիր

գեղըցու արիւնը, ինչ ուստայութենով
որ նրանք ծծումեն չիմա: Անարժան
հոգևորականները անամօթաբար սկսե-
ցին էդ բաները ուրիշ թահը սպատմել
ժողովրդին ու ասել մթամ թէ ես
Քրիստոսին հասարակ մարդ իմ ընդու-
նում՝ Աստուած չեմ ճանաչում նրան,
ու էզակուվ անաստվածութիւն եմ քա-
րոզում ժողովրդի մէջ: Ես սկսեցի հաս-
տատել որ նրանք խարումեն ժողովր-
դին ու ստութիւն են քարոզում. որով-
հետեւ ես սկսեցի էլլիգին հասկացնել
որ քրիստոնէութիւնը չեմ անպատվում,
այլ անարժան հոգևորականներին
եմ անպատվում: Որ քրիստոնէութիւնը
Ճոկ բան ա, հոգևորականութիւնը Ճոկ
բան: Ուրեմն, ժողովուրդը էդ երկու
բանը, այսինքն՝ քրիստոնէութիւնն ու
հոգևորականութիւնը չպէտք է խառնի
մէկմէկու չետ: Քրիստոնէութիւնն ա-

սումէ Աւետարանի բերանով որ եկել
եմ չէ թէ մարդկերանց կորցնեմ, այլ
սաղացնեմ: ամմա հրմիկվան հոգևորա-
կանութիւնը, ինչպէս հաստատած ու-
նիմ իմ տակած զրբում, մեռելի լաշը
ժամի մէջ շուռ է տալիս որ նրա խել-
քով աւելի շատ մեռնողներ լինեն:
Քրիստոնէութիւնը պսակումէր մարժ-
կերանց մէնակ էն վախտը երբ աղջկայ
ու տղի մէջ սէր կայ ու բարեկամութիւն,
ամմա հրմիկվան հոգևորականները պսա-
կումեն, երբ փող կայ ու ինչպէս էլի
իմ զրբում նօմէրներով հաստատած ու-
նիմ, պսակվողներին դուրս են անում
ժամի միջից ու քեասիք գեղըցու թազա
շորի գինն ու ռանգը գեռ հալա սաղ
սաղ վախտ զրբումեն որ մեռնելիս կո-
ղոպուրտի ժամանակ չըկեաղեն իրան-
ցից: Քրիստոնէութիւնը ճշմարտու-
թիւն է քարոզում ու չե ընդունում

անբարոյականութիւն. ամմա հրմիկվան
հոգեորը զանազան անվայել ձանսփանե-
րով փողեր ա խում ժողովրդից ու ու-
րիշ շատ բաներ ա անում, որոնցը
մենք չենք ուզում էստեղ կենդ կենդ
առաջ բերել:

Ամմա մտներիցս զցենք մի առ ժա-
մանակ էս տեսակ տխուր բաները, որոնք ա-
ռաջեն բերում մարթկերանց համար խեղ-
ձութիւն ու մտիկ տանք տեսնենք ին' չ
ձանփով է ստեղծում մարդկութիւնը իր
համար բաղդաւորութիւն։ Ամէնից ա-
ռաջ տեսնենք ինչ ա լինում ուրիշ լու-
սաւորված աշխարհներում, Եւրոպա-
յում զիսաւորապէս ու ինչ ա լինում
մեր մէջ, խեղճ՝ անուսումն՝ ողորմելի
գեղօցիներիս մէջ։

Եւրոպայի մէջ Գլամանդրիայի գե-
ղօցին ամէն աշխատանք զործ է զնում
աղեի համար. տուն է շինում որ արե-

գակը չբարձրացնի նրանից գէշ չոտեր,
հաւաքումէ մեծ ձանսապարհների ցեխե-
րը ու նրանցով պարարտացնում է
գաշտերը, բաղերը ու բակի՝ սիսեռի և
լորու բոստանները։ Տան հայվանների
ցէթը հաւաքումէ ամանների մէջ ու էդ
ցէթով ջրումէ շողկամը, որ ինչպէս ձեզ
էլ էդ յայտնի կլինի յաջող կերպով կը-
րումնի, եթէ հողը փիսրուն լինի. բայց
նա աւելի յաջող կերպով կըսնի, եթէ
ցէթով է ջրվում։ Ամմա մեր մէջ մեր
հայվանների ցէթը բոլորովին անմեղ
տեղը կորչումէ։ Ամի կարելի է ասէք
թէ շատ շավերցիք ոչ հայվան ունեն,
ոչ էլ կարողութիւն նրան առնելու։ Եզ-
մեղ գրիւսաւ ա երեւում մենակ գրսից.
Պլամանդցին էլ չունի. ամմա ձեռը
երը մի քանի բազկեր են ընկնում, նա
առնումէ նրանցով սկզբում խոզ իսկ
յետոյ հորթ, որ մի քանի ժամանակից

անբարոյականութիւն. ամմա հըմիկվան
հոգեորը զանազան անվայել ճանփանեւ
րով փողեր ա խլում ժողովրդից ու ու-
րիշ շատ բաներ ա անում, որոնցը
մենք չենք ուզում էստեղ կենդ կենդ
առաջ բերել:

Ամմա մտներիցս զցենք մի առ ժա-
մանակ էս տեսակ տխուրբաները, որոնք ա-
ռաջ են բերում մարթկերանց համար խեղ-
ճութիւն ու մտիկ տանք տեսնենք ինչ
ճանփով է ստեղծում մարդկութիւնը իր
համար բաղդաւորութիւն: Ամէնից ա-
ռաջ տեմնենք ինչ ա լինում ուրիշ լու-
սաւորված աշխարհներում, Եւրոպա-
յում գլխաւորապէս ու ինչ ա լինում
մեր մէջ, խեղճ՝ անուսումն՝ ողորմելի
գեղցիներիս մէջ:

Եւրոպայի մէջ Պյամանդրիայի գե-
ղցին ամէն աշխատանք գործ է դնում
աղքի համար. առն է շինում որ արե-

գակը չքարձրացնի նրանից գէշ հոտեր,
հաւաքումէ մեծ ճանապարհների ցեխե-
րը ու նրանցով պարարտացնում է
գաշտերը, բաղերը ու բակլ՝ սիսեռի և
լոբու բոստանները: Տան հայվանների
ցէթը հաւաքումէ ամանների մէջ ու էդ
ցէթով ջրումէ շողկամը, որ ինչպէս ձեզ
էլ էդ յայտնի կլինի յաջող կերպով կը-
բումնի, եթէ հողը փխրուն լինի. բայց
նա աւելի յաջող կերպով կըմնի, եթէ
ցէթով է ջրվում: Ամմա մեր մէջ մեր
հայվանների ցէթը բոլորովին անմեղ
տեղը կորչումէ: Ամի կարելի է ասէք
թէ շատ շափերցիք ոչ հայվան ունեն,
ոչ էլ կարողութիւն նրան առնելու: Եզ
մեզ զրիւստ ա երեւում մենակ գրաից.
Պյամանդրին էլ չունի. ամմա ձեռը
երբ մի քանի բազիք են ընկնում, նա
առնումէ նրանցով սկզբում խոզ, իսկ
յետոյ չորթ, որ մի քանի ժամանակից

յետ կով դառնալով, ծնում՝ բերումէ
իր կարգով նոր հորթեր ևայն։ Իսկ
դրանց կերը (կօրմը) նա ունենումէ
նրանով, որ իր բոլոր ունեցած չունե-
ցածը մախումէ կորմի խոտեր, շաղկամ,
կարտոփի, կեազար ու սրանց նման բա-
ներ ցանելում։ Ու աքինչութենով՝ հո-
ղագործութենով էլ էնքան աշխատումէ
որ մենակ իր օղլուշաղի տարվա հացի
ոխիսը կարողանումէ ծածկել։ Խզպէ-
սով նա սաղ տարին համ լաւ լազա-
թին իր օղլուշաղն է կառաւարում,
համ էլ իր տարվա խարջն է ըոլորովին
հեշտ կերպով ու իր վախտին տալիս։
Ամմա մենք գեղըցիքս շատ անգամ հէսց
բաղդիցն ենք կեանզեատվում ու չենք
իմանում թէ մեր խեղճութիւնը մի կող-
մից էլ մեր բանը իրան զայդում չքերե-
լուցն ա։ Ամմա մենակ ֆլամանդի գե-
ղցին չի էղպէս խելօք ու լաւ ապրում։

Տոսկանիայի երկիրը, որ Խտալիայի մի-
ջի փողոցումն է գտնվում, ամէնից լաւ
հողն է. չիւնքի գեղըցիները իրանց խէլ-
քով ու միախօսք աշխատութենով ըն-
տեղի փխակուտ հողերը չորացրած են,
ամէն մի արտին արված է մի այնպիսի
ձև, որ հնձի լիութենին աւելի շատ է
օգնում ու փէշակով՝ արուեստով ջրի ար-
խեր անցկացրած վարելահողերի արանք-
ներում։ Հմի պիտի ծիծտղէք ու ասէք՝
թէ Ըուլաւրա մէջ մի պուճուր գէտ
ոնկինք էն էլ չորտցել է ու հիմ պ.
Գրիգորը նոր ջրի արխերի անցկացնե-
լու համար ա խօսում, ամմա ես էլի
կասեմ որ մեր բան չասկանալուցն ա.
այ, էսպէս։ Ըուլաւերը, ինչպէս լսու-
մեմ, մօտ 700 տնից է շինոծ. ՚ի
հարկէ, էնպէս տուն կայ որ մի տղա-
մարթ էլ չունի, ամմա շատ էնպէս
տուն. էլ կայ որ իր մէջ 5-6 տղամարթ

ունի: Եղ ու գեօրա միջին ճանփով
գցենք ամէն մի տան վրա 3-3 տղա-
մարթ որ կնշանակէ թէ սաղ Ըու-
լաւրա մէջ 2000 ու մի հարիւր աշխա-
տող տղամարդիք կան. մի հարիւր էլ դէն
գցենք, կմնա 2000: Եթէ էղ 2000-ից
ամէն մինը իր մաից կտրի ու սաղ տա-
րին վեր գայ 10-10 մանէթ, — ապա
տարվա գլխին էղ քեզ կանի 20000
մանէթ, որ եթէ օրինաւոր կերպով
ու օրինաւոր տեղերում տանք մի տարի
վագով երկու շահի շահով, ապա տար-
վա վերջը կստանանք 2400 մանէթ
շահ, որ գլխի վրէն դնելով կստանանք
22400 մանէթ փող: Մի տարուց յետ
մենք կարող ենք լու ուստա բերել ու
հորչալուի ջուրը ամենամեծ հեշտու-
թենով Ըուլաւրի վրա գցել: Մենք
Ըուլաւրեցիք փոխանակ մենք ինքնե-
րը գործ կատարելու, յոյսներս դնու-

մենք մի քանի իշխաների վրա. որոնք
աւելի իրանց փորի վրա են միտք ա-
նումքան գեղի դրութիւնը լաւացնելու:
Խչի^o. որովհետև մեր աչքերը գեռ փա-
կված են, մեզ գեղըցիներիս մինչև հի-
մա շատ գրափառ գրափառ խօսողներ
ու մեր ջերը ծծողներ յիմարացրել են
ու յիմարացնումեն ու մենք գիտու-
թեան ուսումով գեռ չենք բաց արել
մեր փակված աչքերը: Եւրոպական աշ-
խարհների շատ տեղերում գրեթէ ամ-
մէն մի գեղըցի գիտի հետեւեալ բանե-
րը: Կա մենակ մի բան չի ցանում իր
բոստանում, այլ աշխատումէ թահը
թահը բաներ ցանել օր. թամբաքի,
քեալամ, կարտոփ և ուրիշ բաներ. մէկ
էլ ինչպէս վերևն ըսեցի, աղբը փէ-
յինը նա զգուշութենով հաւաքում ու
իրան հէսաբով դրուստ կերպով փայ է
անում բաղերի, բոստանների ու արտե-

թի վրա: Աւասի էդ, ընտեղի գեղըցին իր բոստանի լաքերն էլ է փէյնում ու լաքերը վարելուց յետ աշխատում ահողը փխրացնել, որ շատ օգնումէ նրանց վրա ցանած բանջարների լիքը լիքը ու առատ դուրս գալուն. ու էդ փխրուն հողը էնպէս են շինում որ բամին չկարողանայ նրա վրա փէլ ու չուրացնել: Երրորդ, ընտեղի գեղըցին մեծ աշխատանքով քաղ ա հանում իր բաղերն ու բօստանները, ու իստակումէ նրանց մէջ լաքերը ու ծաղկանոցները անպէտք խոտերից, որոնք ինչպէս ծեզ էլյայտնի է շատ մեծ վնաս են տալիս առ հասարակ ամէն տեսակ բանջարների ու ցանած բաների: Չորրորդ, երբ ընտեղի գեղըցին գրօշ գրօշի վրա գալով առնումէ, ինչպէս վերևու տեսանք, աւելի խերովի տան հայվաններ, ինչպէս. եղը, կով, ոչխար եայն, — ապա

նա աշխատումէ որ ինչքան կարելի է հայվանների տան կերակուրը շատ ու բոլ լինի: Ըտուրից էն խերն ա դուրս գալիս, որ հայվաններն աւելի շատ թրիքներ են տալիս հողերը պարարտացնելու համար, իսկ դրանց մէջից կովերը սաւայի աղը ու ցէթ տալը, աւելի շատ կաթն էլ են տալիս. իսկ կաթից թէ գեղըցին ինչպէս լաւ ա իմանում շատ լաւ եղ ու պանիր շինել դրա մասին էլ ասել չի հարկաւոր: 5) Ընտեղի գեղըցին զոչաղ բան ա անում, ինչպէս էլ մեր գեղըցիները, ամմա նա մի և նոյն ժամանակ փորձ ա փորձում ամէն թահը հողագործական գործիքներ, թիեր ևայն: Վայ ինչ մեր մէջ էն մեր պապերից շինած կիւթանը, եղներով վարիլը, մի խօսքով միշտ մի ղայդի բան անիլը հա կա, հա կա ու հա կա: Եւ չենք ասում, թէ մի փորձ

փորձնք հմի էլ ուրիշ դայդի վազը
կտրիւ ուրիշ աւելի հեշտ դայդով վա-
րել մեր հողը ևայլն, ևայլն։ Ա երջա-
պէս, ընտեղ Եւրոպայում շատ տեղերում
հոգս են քաշում կօպէկ կօպէկի վրէն
դնելով շատացնել տան հայվանները ու
ոչխարները, որոնց մենակ բուրթն ու
պանիրը հերիք էր գեղջու սաղ տար-
վան կառաւարութեան համար։

Ամմա մենակ իրանց երկրի բերքե-
րով չեն բաւականանում եւրոպացիք.
Նրանք գալիս են մեր երկրի գրեթէ
բոլոր հում ու անպատճառ բերքերը
տանում իրանց աշխարհը, էնտեղ շե-
նում սարբում ու բերում մեզ վրա սա-
զացնում մինը տասնուչինդով՝ քսանով։
Օրինակ, քեօթուկները. երոպացիք,
գլխաւորապէս ֆրանցուզները, գալիս են
մեր աշխարհների քեօթուկները տանում
և եթէ ամէն մի քեօթուկ մեզանից

առնում են 20-25 մանէթով, քեօ-
թուկից զանազան սիրուն աթոռներ,
սեղաններ և ուրիշ բաներ են շինումու
բերում 25 մանէթ անոց ապրանքը մեզ
նստացնում 250-300 մանէթ։ Ապրէ-
շում, ինչպէս կարդումենք Տոլեհի հա-
շուի մէջ, տարեկան հազար պուդ դուրս
է գնում Գետնջից Եւրոպա և եթէ
ապրէշումի փուտը մեզանից առնեն
30-40 մանէթով, մեզ վրա պիտի նըս-
տացնեն փուտը իմ կարծիքով ամենա-
քիչը 600-ից մինչ 800 մանէթ, այ-
սինքն մէկին քսան ու էլի աւելի։ Գի-
նու շամպանսկու բութիլկէն մեզ վրա
կովկասում նստումէ 7-8 մանէթ, մի
գիւղիւմից եթէ կարծենք որ տասը բու-
թիլկա կդուրս գայ, ապա մի գիւղիւմ
շամպանսկին մեզ վրա կնստի 70 կամ
80 մանէթ։ Ամմա մեր գեղջուն հազար
ուրախ կլի, եթէ իշխանները իր բաղե

շիրան առնեն գիւղիւմը երկու մանէթով.
այն ինչ նրանց շամպանսկի գինին էլ
մզումեն խաղողի վազնից, մերն էլ: Ինչի-
ցըն է, գեղցին եղայրներ, որ նրանց
ապրանքը էնպէս մեծ ու աչագին գնով
է գնում ու մերը գեռ գտնվումէ իր ամե-
նախղճալի վեճակի մէջ: Միթէ էլի չէք
հասկանում որ մեր քոռութենիցն է ու
նրանց ուսումից: Մեղ հասկացրել են
մինչև հիմա շատ դարտակ մարդիկ ըստ
մեծի մասին անհիմն բաներ, մեր մանկու-
թեան ոսկի ժամանակը սպանել են օխար
—ովթ տարիներով ու էս տեղեկու-
թիւններից չնն տվել մեղ և ոչ մինը:
Ու վերջը, մեծանալով, տեսել ենք բե-
խերնիս դուրս եկան, միրուքնիս Ճիւ-
ղեր ձգեցին. բայց, աւաղ, գլուխնիս
ըստ մեծի մասին մենակ փթիրներով ու
ախմախ բաներով են լցված, որ կետն-
քին ըսկի հարկաւոր ու պետքական բա-

ներ չեն: Ամմա միթէ գիտութեան
ու ուսման արդիւնքները մի միայն սը-
րանք են: Մտիկ ավելք Փրանցուզնե-
րի, գերմանացիների վրա, որոնք գալիս
են մեղ մօտ Կովկաս Եւրոպայից:
Կրանք գրեթէ միշտ և ըստ մեծի մա-
սին կարմիր և զել թուշեր ունեն, ա-
ռողջ և առոյգ չան. ամմա մեր խեղճ,
ողորմելի և քեասիք գեղցիները, ոչթէ
հարիւտներով, այլ հազար — հազարնե-
րով^{*)} մեռնումեն, շատ անգամ գեռ ծլած
ու ծաղկած հասակի մէջ. Էն էլ ընչից,
շատ փայը գրեթէ տաքութիւնից՝ ջեր-
մից: Ինչի. որովհետեւ մենք խեղճ գե-
ղցիներս չգիտենք որ ջերմը առաջ է
գալիս գլխաւորապէս շատ քաղցր բա-

*). Ճառի խօսքն այստեղ ընդհանուր, այսինքն
թուրք, հայ, վրացի բոլոր գեղցիների վրա է, և
ոչթէ մենակ նուլաւորա գեղցիների վրա:

ներ ուտելուց, վաստ ջրից, ջանի կաշին
ցիսօտ պահելուց որ ջանի կաշվի ծա-
կերը կախվումն ու արիւնի անպէտք
ջուրը՝ բրտինքը՝ իր աւենորդ տաքու-
թենով մնումէ մեր ջանի մէջ, արիւնը
ապականում՝ կեղսոտումէ ու տաքու-
թիւն առաջացնում: Քանի քանի ջա-
հել տղերք, որոնք կարող էին շատ ա-
պրել, իրանց սաղ սաղ գերեզման են
դնում, իրանց դվաթը անխնայ կերպով
մնխելուց: Այիթէ չգիտէք, գեղըցի
աղքերներ, որ ձեր միջից շատերը հըն-
ձին կամ ուրիշ բան ընելիս ամառ ժա-
մանակ, քրտնակոխ էլած գալիս ընկ-
նում են աղքըրի ջրի վրա, խմում ընչ-
կի կշտանալը ու գալիս տուն ու մէկ
էլ էն տեսնաս գանգատվումն թէ հի-
անդ են: Անց չե կենում դեռ մի շա-
բաթ, շաբաթ ու կէս, և մեռնումն էն
խեղճ գեղըցիք սուգի ու յուսահատու-

թեան մէջ թողնելով իրանց ողորմելի օղ-
լուշաղնիս: Անչիցն էր էդ առողջ ու ռա-
շիդ գեղըցիների մահը? նրանք հու հըն-
ձելիս շատ մարդկերանց էին յաղթում,
հօպմա, հօպմա անելով. ընչիցն էր մա-
հը?... Թաէ պառաւ կնանունց հարցը-
նենք, նրանից ա որ հրեշտակը տուր
տվեց: Վմմա, գիտութիւնը ուրիշ թահը
ա բացատրում: Տարութենից էդ վախ-
տը արիւնը սաստիկ շուտութենով է,
պտտվում մեր ջանի դամարներում. իսկ
սառը ջուր խմելուց արիւնը իսկոյն
կաղնումէ ու արինի դամարների պա-
տերի ամենից փոքր ծակերով շաղ է
հնցնում մեր բոլոր ջանի մէջ ու էլ չե
մտնում իր առաջին շրջանառութեան
մէջ ու դրանից մահ է առաջանում:
Աբա ասէք տեսնեմ: ով գիտի ձեզա-
նից որ խողի մաից կարող ա մարդ մեռնիլ.
չենքի եթէ դուրբինդով եշումեն գիտ-

նականները խողի մաի վրա,—ապա նրա
մէջ գտնումնն մանր Ճիճուներ, որոնք
ասվումնն արիխիններ ու ուտելուց յետ
կպչելով մեր ստամբսի կամ աղեքների
պատերից, բունակալումնն, փորի ստու-
տիկ ցաւ են առաջ բերում ու յետոյ էլ
մահ. էդ պատճառով, եթէ մարդ ու-
տում էլ է խողի միսր, ապա նա շատ
լաւ պիտի լինի խորոված, մինչև որ էդ
Ճիճուները կամ ինչպէս ասումնն, տրի-
խինները սպանուվին խորովելուց: Ո՞վ
զիտի որ կորիզ ուտելուց կարող է սաս-
տիկ փորցաւութիւն առաջ գալ ու յե-
տոյ մոհ. չիւնքի կորիզը աղեքների մի-
ջով անցկենալիս կարող է ընկնի մազա-
յին շառաւիզ ասված բարակ աղեքնե-
րի մէջ ու էնտեղ մնալով ու էլ դուրս
չգալով էնտեղից, առաջ կբերի սաստիկ
փորացաւութիւն և յետոյ մահ: Ո՞վ
մեղ կարվացնի թէ որո՞նք են ամենից

շուստ մարսվող կերակուրները, որ խիստ
հարկաւոր է իմանալ հիւանդին. չիւնքի
նրանց ստամբսը շատ թոյլ է ու չիւ-
կարող դժար մարսվող կերակուրները
մարսել ու հիւանդութիւնը աւելի եր-
կարանումէ ու տանջող տառապանքնե-
րի հասցնում նաչախին: Գրեթէ ոչ ոք
մեզանից. ամմա զիտութիւնը մեղ հաս-
կացնումէ որ հեշտ մարսվող ու ջանին
մնունդ տվող կերակուրները են թուզուն-
ների ու վառիկների միսր. և թէ նա-
չախը էդ կերակրների թիքէքը շատ
լաւ պիտի ծամի որ նրանք աւելի շուտ
մարսվեն ու հիւանդը շուտ վեր կենայ իր
վշտերի ու ցուերի մահճից, կողէնքից:
Խակ ռուսերէն լեզու հիմնաւոր կերպով
իմանալով մենք զեղցիներս չենք թող-
նի որ տաճր, տասնուինդ տարի քըր-
տինքով դատած բաղը, տունը, կալը ա-
նիրաւ մարդիք մեր ձեռքից խլեն և

կամ շատ անխիղճ աղվակատներ մեր
դատաստանական գործերը վերցնեն ու
դուրս բերվելի ստացուածի մեծ կէար
իրանց չամար վերցնեն, փողն էլ էս
գլխից ջէրը դնեն։ Ուրեմն, տեսնումէք
որ ուսումը չոր՝ մեռած ու անկենդան
բան չի, ինչպէս որ շատ դարտակի մար-
դիք մեզ մինչև չիմա հասկացրել են ու
մեր խելքը տոպրակ հաւաքելով, մեզ
բոլորովին յիմարացրել... Ուսումը կեանք
է, ուսումը ղվաթ է, որ միշտ ու ա-
մէն տեղ հընկեր է դառնում, միշտ և
ամեն տեղ օգնումէ, ճանփէք է մեզ
նշանց տալիս ցաւից ազատվելու, մեր
կեանքը ապաչովեցնելու. և մեզ ներքին
կերպով ուրախացնումէ ու միշտ միխ-
թարում մեր գոյութեան մէջ։ Այս էդ
տեսակ ուսում եմ հաստատ կերպով
մտքումն վճռած տալու ձեր որդկերանց,
ուլաւրա հասարակութիւն! Զեղանից

է կախված, ուրեմն, ձեր որդկերանց
ապագայ քամբաղդութիւնը կամ բաղ-
դաւորութիւնը, նրանց լաւ և կամ եր-
ջանիկ ու բաղդաւոր կեանքը ապագա-
յում։ Իմ ուսումնարանը կընդունի իր
մէջ ամէն դասակարգի ու ամէն աղգի
որդիք. որովհետեւ, մենք բոլորս էլ —
թուրք, ռուս, չայեր, ջչուղներ, վրա-
ցիք, — բոլորս էլ հընկերներ ենք, որ
պէտք է հընկերական կեանքի մէջ ման
կեանք՝ փնտուենք մեր ուրախութիւնը։
Հարուստ մարդիք ու միջնակարգ մար-
դիք պիտի իրանց կարողութիւնն ու գեօրա-
վարձատրեն ուսումնարանի կենդանա-
րար ու կենսատու աշխատանքը։ Իսկ
կան մեր մէջ էնպիսի քեասիք գեղօցի-
ներ, որոնք ունեն շնորհալի որդիք,
սրտով ցանկանումն իրանց որդոցն էլ
ուսում տալ ամմա, մէջքերնին կոտր-
ված են ու ուժերնին չեն պատում հաս-

նել ուզեցած ցանկալի նպատակին։ Եղ տեսակ խեղճերի որդկերանց իմ ուսումնարանը, խեղճութեան ստուգութիւնը ուրիշներին հարցնելով խմանալուց յետ, անչախ ընդունելու է իր մէջ, անչախ կարդացնելու, անչախ տալու նրանց կարդալու գիրքը, թուղթը, թանաքը, գրիչը ու միւս ուսումնական հարկաւորութիւնները։ Թաղղ նա էլ, որ ինքը որդիք չունի, չսախանձուի նրանց վրա, ովքեր որդիք ունեն, էլի ուսումնարանի լաւն ուզի, չիւնքի, ուսումնարանն էն պէս բան ա, որ էսօր նրա մէջ նրանք օգուտ կքաղեն, ովքեր որդիք ունեն։ Էզուց նրանց որդիքը դուրս կդան ընտեղից ու կմտնեն միւսների որդիքը, որոնք առաջ որդիք չունեին։

Մաներիցս զցենք մեր մասնաւոր անբաւասկանութիւնները, մեր մասնաւոր շահերը ու սնրատ սրտով միանանք

ընդհանուրի (բոլորի) շահը առաջ տանելու աննախանձ կերպով։ Մի սիրուն օր, երբ ձեր որդկերանց աչքերն էլ իմ աչքերի պէս, կբացվեն ու կտեսնին քեասիր գեղըցիների լուռ ու թաքուն քեասիրութիւնն ու ցաւերը, — էն վախտը նրանք էլ կցաւեն քեասիր մարդկութեան վրա, նրանք էլ կաշխատեն կարելիութեան չափ չափաւորել քեասիր գեղըցիների խղճալի վիճակը ու նրանք էլ կսկսեն ինձ պէս ասել.

«Քեասիր գեղըցի, մինչ ե՞րբ դու պիտի»
 «Լինես Ճնշված անիրաւ բուրժուից?»
 «Մինչ ե՞րբ խարող սլուկների»
 «Բերանք պիտի ծծեն քո սուրբ արիւնից?»
 «Նկատողական ուսման անմահ Ճշմարտութիւններ»
 «Բացել են արդէն մեր աչքերը ֆակված»
 «Ճեսնումենք սիրուն սիրուն զուարծութիւններ»
 «Միայն, աւաղ, բուրժուի համար պահված!»
 «Քու սեցած ձեռները, քեասիր գեղըցի»
 «Բզարումեն սաղ տարին բահի ու թիի տակ!»
 «Ու քրտինքի կաթիլները քու սեցած ճակատից»

«Հոսումեն շատ անդամ, ինչպէս արծաթի առուակ:»
 «Եւ ի՞նչ սիրելիս... էլի շորերը վրայիդ»
 «Միշտ ծակծակոտ ու քրքրված,»
 «Ու ամօթանքը օղլուշաղեդ,»
 Ո՛չ, նման լանթերով պատուած:»
 Իսկ բուրժուան անիրաւ»
 «Գուքանում նստելով կամ գաղարկ ման գալով»
 «Ապում է կուշ և ամենալաւ,»
 «Խեղճ, քո թիի ու բահի հաշվով!...»

ՏԵՏՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ
 (ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ):

Աղասիութենով — կերծաւորութենով.
 Աղբ — թրեք.
 Աղան — (աղ և ցանել խօսքերից) բանջար՝ կանաչեղին:
 Ամէն թաշր — ամէն տեսակ:
 Ամա — բայց, սակայն:
 Անջաղ — հազիւ:
 Արխեր — ջրանցքեր:
 Աքինչութիւն — հողագործութիւն:
 Բաղեք — աբասինեք՝ 20 կոպէկանոցնեք:
 Բալամ — ընկեր, անձն:
 Բաղաքաղ — այգեկութք:
 Բաղ — այդի.
 Բուրժուա — կրտող՝ անխղճմտանք կերպով ծծող՝
 հարստանող (որ և է անարդար միջուցով՝ պարապմունքով): Եղ մնքով՝ անարդար կերպով ծծող միջոցը կամ պարապմունքն էլ ասվումէ բուրժուականութիւն:

Բոստան — բանջարանոց, բաղչայ.
 Գէշ — գաղանաբարս, կատաղի, խառնակող՝
 անպիտան:

Գաւի՝ դառաբայ — կոխ՝ զալմազալ;
 Գամարներ — արենատար ամաններ, երակներ:
 Գրիւստ — ուղեղ, ճշմարիստ:
 Եա — կամ:
 Եշելով — նայելով, մտիկ տալով:
 Ելլեղ — հասարակութիւն, ժողովուրդ.
 Էնչկի էղ վախոր — մինչև էղ ժամանակ:
 Էնտեղի — այնտեղի:
 Թազա — նոր
 Թալակ — որոգայթ, խորամանկութիւն:
 Թալակ սարել — չար հնալքներ գտնել:
 Թալանողներ — յափշտակողներ, աւարառուներ:
 Թալանցութիւն — աւարառութիւն, յափշտակութիւն:
 Թակել — ծեծել հասցնել ֆիզիքական հարուածներ.
 Թահր — տեսակ:
 Թորոն — թոնդիր՝ հնոյ՝ փուռը որտեղ թխումն հաց:
 Ժաժ — վարվեցի:
 Լազաթին — ախորժութենով, համով:
 Լաշ — դիակ՝ անշնչացած մարմին:
 Լաք — մարդ:
 Լուծ եղը — զոյդ՝ ջուղդ եղների:
 Խարջ — ծախս. նշանակումէ նոյնպէս՝ հարկ:
 Խէր — օգուտ, շահ, վաստակ:
 Կաղնել — կանգնել:
 Կեալը — գալուստը:
 Կեանգեատ — գանգատ՝ բողոք:

Կուխնայ — խոհանոց, կերակուր եփելու տեղ:
 Հայվան — արջառ:
 Հերու — անցած տարի:
 Հմի — հիմա, այժմ:
 Հու — խօմ, իմացիր որոշ մասնաւունք — ուրի,
 Ղայդէն — եղանակ՝ ձեւ գործադրութեան:
 Ղոնաղ անել — հրամիրել շնորհաց — լրաց դժ,
 Ղոջալք — քաջալքարիս՝ մայր՝ մայթաքայլան:
 Ղուզի — դահր, սիրելու ցանկալի, որդեակ: Ու մաժու
 Ղուրբան — զոհ՝ մատազ:
 Մազանդար — որոշ ընդհանուր գնահատութեւն:
 Մենախօսութիւն — երգ՝ խօսակցութիւն իր հետ կամ
 անխօս արարածների հետ:
 Մթամթէ — իրը թէ: յմբարքաւ — յմի առ
 Նաշախ դամհիւանդաւ տպաք: յմառուրքը — յմեզքեցի
 Շահի — օ կոպէկանոց: յմբարքափափ — յմբազոյի
 Շիրա — նոր գինի, մաշար:
 Ռւսայութենով — հմառութենով:
 Չիւնքի — որովհետեւ:
 Չուստ — շուտ:
 Պուճուր — փոքր:
 Պոլել — ասխատականուծել:
 Չան — մարմին:
 Թաշիդ — աներկիւղ՝ քաջ: յմինալի — յմայի
 Թիսիս — մնունդ (օրական): մնալուն: յմայուն: յմայուն:
 Աղուսուն բիւթիւն — ողջ տարին մնունդհամ:

— 50 —

Սաղ սաղ — ողջ-ողջ, կենդանի: մահացաւ մահացաւ
 Սաւայի — բացի: մարտն ծարքն ապահան
 Մհաթ — ժամացոյց: Անելու անըն միա
 Վագա — ժամանակամիջոց: պահանձն առաջ առաջ
 Վախտերքին — ժամանակներում: առաջանակ առաջանակ
 Վերքցել — ցածրացնել: վազանութեան վազանութեան
 Տիւ-(ձայնարկութիւն՝ պիտի հնելինչպէս ֆրանսի-
 ական և Կամ ու. ԹЮ) — խրախուսող ձայն կալկա-
 սող եզների համար:
 Ցէթ — մէզ շեռ: առաջ առաջ առաջ առաջ
 Փայ — բաժին, մասնէ: առաջ առաջ առաջ առաջ
 Փայ անել — բաժանել:
 Փէյնել — աղբացնել
 Փթիրներ — կեղտոտութիւն, անպէտք՝ յիմար բաներ:
 Փխրացնել — փափկացնել
 Քաշովի — բրնձէ փլաւ, առանց քամելու:
 Քարթու — կոշտացած (հնացած հաց)
 Քեսիր — աղքատ, չքաւոր, խեղճ:
 Քելէլս — հոդու հաց:
 Քէթիուդա — իշխան:
 Քոլ — անտառ:
 Օխնեց — օրհնեց:
 Օղլուշող — ընտանիք՝ գերդաստան:
 Օջագ — վառարան՝ կրակիտղ:



ՀՅ Ազգային գրադարան



NL0585313

